Ազգ
Azg
armenian daily
26 ՄԱՅԻՍ 2001 ՇԱԲԱԹ 96 (2300)

# Կանխատեսում են ավերիչ երկրաշարժ Թուրքիայի հյուսիս-արեւմուտքում եւ ցունամի՝ Մարմարա ծովում

ԱՆԿԱՐԱ, 25 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մի խումբ թուրք եւ ամերիկացի գիտնականներ կանխատեսում են նոր, ավերիչ երկրաշարժ Թուրքիայի հյուսիս-արեւմուտքում: Նրանց կանխատեսումներով, ստորերկրյա ցնցման ուժն այնտեղ կկազմի 6,8 բալ:

Բացի այդ, երկու երկրների ներկայացուցիչների նախապատրաստած զեկուցագրում ասվում է երկրաշարժից հետո Մարմարա ծովում ցունամիի ծագման անխուսափելիության մասին, որի ալիքները տեղ-տեղ չորս մետրից էլ բարձր կլինեն: Ծովային տարերքի հարվածը կընդգրկի 10-կիլոմետրանոց առափնյա գոտի, ինչն անխուսափելիորեն կհանգեցնի նշանակալից ավերածությունների ու զոհերի, նշում են գիտնականները, չճշգրտելով, սակայն, թե կոնկրետ երբ է ցունամի սպասվում:

ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

# Պայմանագիրը ռազմաքաղաքական դաշինք դառնալու միտումներ ունի

*Եվ ի տարբերություն ՆԱՏՕ-ի՝ ոչ թե ընդարձակման, այլ ընդհանուր սահմանները պաշտպանելու նպատակ է հետապնդում*

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՊՀ Հավաքական անվտանգության պայմանագրի (ՀԱՊ) անդամ վեց պետությունների (Հայաստան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Կիրգիզիա, Տաջիկստան) երեւանյան գագաթաժողովն իրավամբ կարելի է համարել պատմական: Իննամյա անգործությունից հետո ՀԱՊ-ը հավակնություններ ունի դառնալու ռազմաքաղաքական դաշինք, որը, սակայն, ի տարբերություն ռազմաքաղաքական, ինչու չէ՝ ագրեսիվ ՆԱՏՕ-ի, ոչ թե ընդարձակման, այլ պայմանագրի անդամ երկրների ընդհանուր սահմանները պաշտպանելու նպատակ է հետապնդում: Չի բացառվում, անշուշտ, որ ՀԱՊ-ին անդամակցելու ցանկություն հայտնեն ԱՊՀ այլ պետություններ, օրինակ, Ադրբեջանը, Վրաստանը, Ուզբեկստանը, որոնք ՀԱՊ-ի անդամ էին եւ այդ անդամությունը սառեցրել են երկու տարի առաջ: Գործունեության կամ «չգործության» ինը տարիների ընթացքում ՀԱՊ-ի անդամ պետությունների հանդիպումներում անընդհատ նշվել է, որ ՀԱՊ-ը ներքին հակամարտություններին չի միջամտելու: Օրինակ, Ադրբեջանը եւ Վրաստանը պայմանագրին անդամակցեցին առաջինը ԼՂ, երկրորդը՝ Աբխազիայի եւ Հարավային Օսիայի հակամարտությունները, Մոսկվայի օգնությամբ, ի նպաստ իրենց լուծելու ակնկալիքով:



Տես ➧ էջ 2

ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ

# Հայրապետական պատարագ կմատուցվի Նյու Յորքի Կենտրոնական այգում

Վաղը, կիրակի, առավոտյան ժամը 11-ից սկսած, հովվապետական այցով Մ. Նահանգների Արեւելյան թեմում գտնվող Ամենայն հայոց հայրապետ Գարեգին Բ կաթողիկոսը հայրապետական պատարագ է մատուցելու Նյու Յորքի նշանավոր Կենտրոնական այգում (Central Park), որտեղ ակնկալվում է շուրջ 20 հազար հոգու ներկայություն: Ծրագրվում է սուրբ պատարագը ուղիղ եթերով հեռասփռել տեղի հեռուստակայաններով:



Իսկ այսօրվա համար նախատեսված է մեկ այլ միջոցառում նույն վայրում: Վեհափառ հայրապետի գլխավորությամբ տեղի կունենա քայլամարաթոն դեպի Կենտրոնական այգի, որի ընթացքում հանգանակված գումարները կտրամադրվեն Արեւելյան թեմի առաջնորդարանի Հայաստանի օգնության ֆոնդի (ՀՕՖ) ծնողազուրկ երեխաների օգնության ծրագրին: Դրան կհետեւի վերընծայման ժամերգություն Նյու Յորքի առաջնորդանիստ Սուրբ Վարդան մայր եկեղեցում, ինչպես նաեւ մշակութային ծրագիր առաջնորդարանի «Գավուքճյան» սրահում:

Մ. Նահանգներում Վեհափառ հայրապետի այցելության վերջին օրը կնշանավորվի Սուրբ Վարդան եկեղեցու բակում կազմակերպված «դաշտագնացությամբ», որի ընթացքում հավատացյալներն առիթ կունենան մեկ անգամ եւս ստանալու նրա օրհնությունը եւ հրաժեշտ տալու Հայ եկեղեցու պետին:

ՔԱՂԱՔԱԿԱՆԱՑՎԱԾ ԵԿԵՂԵՑԻ

# Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարքը Բաքվի գլխավոր մզկիթում

ԲԱՔՈՒ, 25 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այսօր ադրբեջանական ժողովրդին ամենաբարձրյալի օրհնությունները մաղթեց Մոսկվայի եւ Համայն Ռուսաստանի պատրիարք Ալեքսիյ Երկրորդը Բաքվի «Թազա Փիր» գլխավոր մզկիթ այցելած ժամանակ: «Մենք գիտենք Ադրբեջանում ավանդական կրոններ դավանող հավատացյալների բարի հարաբերությունների մասին», ասաց ռուսական ուղղափառ եկեղեցու հովվապետը:

Կովկասի մահմեդականների հոգեւոր վարչության պետ շեյխ ուլ իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեն նշեց սրբազան պատրիարքի՝ Ադրբեջան ձեռնարկած այցի կարեւոր նշանակությունը երկու պետությունների համար: Շեյխը, որն այդ այցի նախաձեռնողներից մեկն է, Ռուսական Ուղղափառ եկեղեցու առաջնորդի ժամանումը դիտում է որպես տարածաշրջանի բոլոր մահմեդականների հանդեպ առանձնակի հարգանքի նշան:

Ալեքսիյ Երկրորդը այսօր այցելեց Բաքվի կենտրոնում գտնվող Լեռնային զբոսայգու զոհվածների ծառուղի, որտեղ թաղված են 1990 թվականի հունվարյան իրադարձությունների եւ ղարաբաղյան պատերազմի զոհերը:

Հենց այսօր էլ Ալեքսիյ Երկրորդը այցելեց Բաքվի ամենահին ուղղափառ եկեղեցին՝ Միխայլո Արխանգելսկի տաճար եւ Սլավոնական համալսարանում հանդիպում ունեցավ երկրի հասարակայնության հետ:

# ՀՀ նախագահը մոտ ժամանակներս կայցելի Բելգիա

ԵՐԵՎԱՆ, 25 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանն մոտ ժամանակներս կայցելի Բելգիա: Այցի ճշգրիտ ժամկետները դեռեւս պարզ չեն, CNA գործակալությանը հայտնել են ՀՀ նախագահի մամլո ծառայությունում: Համաձայն «Ազատություն» ռադիոկայանի, Հայաստանի ղեկավարը Բրյուսելում կգտնվի հունիսի 4-6-ը: Այցի ընթացքում նախատեսված են նախագահ Քոչարյանի հանդիպումները մասնավորապես Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ռոմանո Փրոդիի, Եվրախորհրդարանի նախագահ Նիկոլ Ֆոնտեի, ԵՄ Անվտանգության եւ միջազգային հարցերի գերագույն հանձնակատար Խավիեր Սոլանայի հետ: Հանդիպումների ընթացքում կքննարկվեն Հայաստան-Եվրամիություն երկկողմ հարաբերություններին, տարածաշրջանին, էներգետիկային եւ տրանսպորտին վերաբերող հարցեր, ինչպես նաեւ ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացը:

# Երուսաղեմում ողբերգություն տոնակատարության ժամանակ

ԵՐՈՒՍԱՂԵՄ, 25 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մայիսի 24-ի երեկոյան Երուսաղեմի 'Talpiot' տոնակատարությունների պալատում հարսանեկան արարողության ժամանակ տեղի է ունեցել ողբերգություն: «Ռոյթեր» գործակալության տվյալներով, պալատի երրորդ հարկի հատակի փլուզման հետեւանքով զոհվել է 25 մարդ եւ մոտ 300-ը վիրավորվել: Հարսանիքին ներկա էր մոտ 1000 մարդ: Փրկարարները շարունակում են աշխատանքը: Երուսաղեմի ոստիկանության տվյալներով, փլատակներում գտնվում են եւս առնվազն 100-150 մարդ, եւ նրանց փրկության հույսեր գրեթե չկան: Փլվելու պատճառ է նշվում շենքի հիմքի ամրացման աշխատանքների ժամանակ հաշվարկների մեջ թույլ տրված սխալը:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԲԵԼԱՌՈՒՍ

# Այսօր կստորագրվի բարեկամության եւ համագործակցության պայմանագիրը

Մայիսի 26-ին կսկսվի Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի պաշտոնական այցը Հայաստան: Նրա գլխավորած պատվիրակության կազմում են Անվտանգության խորհրդի պետական քարտուղար, ազգային անվտանգության հարցերով նախագահի օգնականը, փոխվարչապետը, որը նաեւ արտաքին գործերի նախարարն է, պաշտպանության, գյուղատնտեսության ու պարենի նախարարները, Ազգային ժողովի Ներկայացուցիչների պալատի նախագահի տեղակալը, պաշտոնատար այլ անձինք:

Մայիսի 26-ի առավոտյան ՀՀ նախագահի նստավայրում դիմավորման պաշտոնական արարողությունից հետո Ալեքսանդր Լուկաշենկոն առանձնազրույց կունենա նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ: Երկու երկրների ղեկավարների հանդիպմանը զուգահեռ տեղի կունենան հայ-բելառուսական բանակցություններ՝ ընդլայնված կազմով: Այնուհետեւ տեղի կունենա համատեղ փաստաթղթերի ստորագրման արարողությունը: Երկու երկրների նախագահները կստորագրեն «Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության միջեւ բարեկամության եւ համագործակցության մասին» պայմանագիրը, կստորագրվեն նաեւ համաձայնագրեր Հայաստանի եւ Բելառուսի կառավարությունների միջեւ ներդրումների իրագործմանն աջակցելու եւ փոխադարձ պաշտպանության մասին, արդարադատության, կրթության բնագավառներում համագործակցության մասին: Նախատեսվում է նաեւ Ռոբերտ Քոչարյանի եւ Ալեքսանդր Լուկաշենկոյի համատեղ մամուլի ասուլիսը:

Պաշտոնական այցի շրջանակում Բելառուսի նախագահը կայցելի Հայոց ցեղասպանության թանգարան, Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում ծաղկեպսակ կդնի Մեծ եղեռնի զոհերի հուշակոթողին եւ կմասնակցի ծառատունկին: Ալեքսանդր Լուկաշենկոն կլինի նաեւ Մատենադարանում, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում:



Մայիսի 27-ին կավարտվի Բելառուսի նախագահի գլխավորած պատվիրակության պաշտոնական այցը Հայաստան:

